

Կայսերական Մեծուքեան Թագաւոր Կայսրին պալատում:
Թագաւոր Կայսրն բարեհաճել է մօտ 15 բոպէ առանձին
ունկընդրութիւն շնորհել Վեհափառին: Կայսեր հետ ունե-
ցած ունկընդրութիւնից Վեհափառն ստացել է շափազանց
նպաստաւոր տպաւորութիւն:

Ամեն տեղ հայ ժողովրդի ուրախութիւնը Թագաւոր
Կայսեր այցելութեան պատճառով եղել է խանդավառ և
սրտագին: Այդ պատմական օրերը Վեհափառ Կաթուղի-
կոսի և հայ ժողովրդի համար միշտ կը մնան յիշատակելի
և թող Տէրը Նորին Կայսերական Մեծուքեան շնորհիւ
իրականացնի Վեհափառ Կաթուղիկոսի և հայ ժողովրդի այն
բարի յոյսերը, որ դարեր շարունակ բազմատանջ հայ
ժողովուրդը սպասում է:

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ՀԵՌԱԳԻՐԸ

ԱԶԳԻՍ ՎԵՃԱՓԱՌՊԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ

Վեհափառ Հայրապետը բախտ է յունեցել ստանալու
Թագաւոր Կայսրից հետևեալ հեռագիրը.

Էջմիածին, Տֆեօրգ ամենայն Հայոց Կարողիկոսին.

Մոսկուա, 9 դեկտ. 12 ժամ. 48 բոպ. զիշեր

Հոգւով շնորհակալ եմ Ձեզնից և յանձ-
նարարում եմ յայտնել Ձեզ հաւատացած
հօտին իմ անկեղծ շնորհակալութիւնը բա-
րեացակամ աղօթքների համար:

ՆԻԿՈՂՍՅ՝

Այս հեռագիրը պատասխան է Նորին Վեհափառութեան
Թիֆլիսից 7-ին դեկտ. Կայսեր ուղղած հետևեալ հեռա-
գրի.

Կայսերական գնացք. Նորին Կայսերական Մեծու-
քեան Թագաւոր Կայսրին.

«Այսօր ս. էջմիածին մեկնելուց առաջ հրաժեշտ տուի
իմ հօտին, որի հետ ջերմեռանդ աղօթք առաքելով առ
Բարձրեային պարգևելու Ձերդ Կայսերական Մեծութեան,
Թագունի Կայսրունուն, Թագաժառանգին և բոլոր Օգոս-
տափառ Տան Թանկագին առողջութիւն և շնորհելու Ռու-
սաց Քրիստոսասէր փառապանձ զօրքին յաղթութիւն, Ես
արկանում եմ առ ոսս Ձերդ Կայսերական Մեծութեան
իմ և հօտիս կողմից ջերմ հաւատարիմ հպատակութեան
ցանկութիւններ, լիակատար առողջութիւն և երկար տա-
րիներ ի փառս և յուրախութիւն Մեծն Ռուսաստանի»:

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեհափառ Հայրապետը Թիֆլիսից մեկնելուց առաջ
ուղղել է Կովկասի Տ. Փոխարքայ Կոմս Վարանցով-Դաշկո-
վին հեռուեալ հեռագիրը.

Նորին Պայծառափայլութեան Կոմս Վարանցով-
Դաշկովին.

«էջմիածնի նախաթոռ վանքը մեկնելուց առաջ հրա-
ժեշտ տալով իմ հօտին և ջերմ աղօթքներ առաքելով
Բարձրեային սիրելի Միապետի և Նրա Օգոստափառ Ըն-
տանիքի Թանգագին առողջութեան, երկարակեցութեան
և ուռտական բաջ զօրքի յաղթութեան համար, բաղդ
ունեցայ հեռագրելու Նորին Մեծութեանն իմ հօտի հաւա-
տարիմ հպատակութեան զգացումները: Ձերմագինս աղօ-
թելով նոյնպէս Ձեր Պայծառափայլութեան առողջութեան
և երկարակեցութեան համար, իմ խորին շնորհակալու-
թիւնն եմ յայտնում Ձեր Պայծառափայլութեան անփոփոխ
բարեխօսութեան համար յօգուտ հայ ժողովրդի: Առա-
քում եմ Ձեզ և կոմսունի ելիզավէտա Անդրէեֆլային իմ
օրհնութիւնը»:

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ